ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2.3
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 22.02.2016թ. ԹԻՎ 110-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 29 հունիսի 2016թ.,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 16:30

Մասնակցում էին.

<u>Հանձնաժողովի նախագահ</u>

Ա. Բարսեղյան ԷՄԾ պետ

<u>Հանձնաժողովի անդամ՝</u>

Մ. Գրիգորյան ՎԿԿ ավագ ինժեներ

<u>Հանձնաժողովի քարտուղար</u>

Գ. Սարգսյան ՊԳՀԾ գնման համակարգող

Նիստին չէր մասնակցում ՏՏԾ ԱԱ ՏԿ ղեկավար Հ. Նիկողոսյանը՝ հերթական արձակուրդում էր

<u>Օրակարգ՝</u>

1. <<ՀԱՆ-ՇՀԱՊՁԲ-15/12(1)-16>> ծածկագրով ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով գնի նվազեցման շուրջ բանակցություններ
2. Հայտերի բացման կասեցված նիստի արդյունքների ամփոփում,

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց <<Էկոմիքս>> ՍՊԸ կողմից էլեկտրոնային կերպով ներկայացված փաստաթուղթը:

Հանձնաժողովի նախագահ Ա.Բարսեղյանը տեղեկացրեց, որ ըստ <<Էկոմիքս>> ՍՊԸ կողմից էլեկտրոնային կերպով ներկայացված փաստաթղթի գների նվազեցման բանակցությունների հրավիրված <<Էկոմիքս>> ՍՊԸ հրաժարվել է նվազեցնել նախապես 3-րդ չափաբաժնով ներկայացված գինը:

Հանձնաժողովն ամրագրեց գնման մրցույթի մասնակիցներից յուրաքանչյուրի գնային առաջարկները.

Հ/Բ	***Գնման առարկայի անվանումը***	***<<Էլիպս-Գրուպ>> ՍՊԸ՝ առանց ԱԱՀ***	***<<Էկոմիքս>> ՍՊԸ՝ առանց ԱԱՀ***	***<<Մարինե-90>> ՍՊԸ՝ ԱԱՀ վճարող չի հանդիսանում***
4	Հեռախոսալար գծային	5250		
6	Մալուխ ՏՈՊ		1413333.33	1 800 000
7	Էլեկտրական մալուխներ ԱՎՎԳ՝ 2 x 1,5 մմ	15833.34	18035.64	
8	Էլեկտրական մալուխներ ԱՎՎԳ՝ 2 x2,5 մմ	30000	33000	
9	Էլեկտրական մալուխներ ԱՎՎԳ՝ 3 x 1,5 մմ	26250	27166.67	
10	Էլեկտրական մալուխներ ԱՎՎԳ՝ 3 x2,5 մմ	35000	39666.67	

Գնային առաջարկների համեմատության արդյունքում հանձնաժողովն ամրագրեց գնման մրցույթի մասնակիցներից յուրաքանչյուր չափաբաժնով 1-ին և 2-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցների ցանկը.

	Մասնակցի անվանումը	Չափաբաժնի համարը *1-ին տեղ*	Չափաբաժնի համարը *2-րդ տեղ*
1	***<<Էլիպս-Գրուպ>> ՍՊԸ***	4, 7, 8,9,10	
2	***<<Էկոմիքս>> ՍՊԸ***	6,	7,8,9,10
3	***<<Մարինե-90>> ՍՊԸ***		6,

Արձանագրվեց, որ 1-ին, 2-րդ, 5-րդ չափաբաժիններով <<Մարինե-90>> և 3-րդ չափաբաժնով <<Էկոմիքս>> ՍՊԸ գնային առաջարկները գերազանցում է գնման առարկայի համար ընկերության ֆինանսական նախատեսումը:

Նշվեց նաև, որ <<Էլիպս-Գրուպ>> ՍՊԸ 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները ցածր են տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Հանձնաժողովը միաձայն որոշեց.

1. ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 44-րդ կետի համաձայն մերժել 2-րդ, 5-րդ չափաբաժիններով <<Մարինե-90>> ՍՊԸ 1-ին և 3-րդ չափաբաժնով <<Էկոմիքս>> ՍՊԸ գնային առաջարկները:

2. ***Սույն ընթացակարգի մասնակիցներ.***

- ***<<Էլիպս-Գրուպ>> ՍՊԸ-ին*** 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժիններով ***ճանաչել 1-ին*** տեղ զբաղեցրած մասնակից,

- ***<<Էկոմիքս>> ՍՊԸ-ին 6-րդ*** չափաբաժնով ճանաչել 1-ին, իսկ 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժիններով՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից,

- ***<<Մարինե-90>> ՍՊԸ-ին 6-րդ*** չափաբաժնով՝ ճանաչել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից,

3. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել <<ՀԱՆ-ՇՀԱՊՁԲ-15/16(1)-16>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը,

4. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներինին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովին ներկայացնել <<ՀԱՆ-ՇՀԱՊՁԲ-15/12(1)-16>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի հայտով առաջարկված ապրանքների անվանումը, տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների համար <<ՀԱՆ-ՇՀԱՊՁԲ-15/12(1)-16>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.5 կետի 3-րդ ենթակետի՝ ցածր գնային առաջարկը հիմնավորող փաստաթղթերը:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 07.07.2016թ. ժամը 11.30 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

<< Էկոմիքս>> *ՍՊԸ կողմից էլեկտրոնային կերպով ներկայացված փաստաթուղթը կից ներկայացվում է:*

Ա. Բարսեղյան		Հանձնաժողովի նախագահ
Մ. Գրիգորյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար